

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՊԱՏԺԻ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏԻ ՓԱՍՏԱՑԻ ԿՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՏԺԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Վերջին ժամանակաշրջանում թե՛ տեսաբան-մասնագետների և թե՛ պրակտիկ աշխատողների շրջանում բուռն քննարկումների առարկա է դարձել պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի արդյունավետության հարցը, այդ մասին կարելի է խոսել միայն պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հիմքերի և պայմանների հստակեցման ու կանոնակարգման պարագայում:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 76-ի 1-ին մասը սահմանում է, որ «վաղաժամկետ կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանականորեն վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի»: Միաժամանակ, նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

1) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը,

2) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը,

3) առանձնապես ծանր հանցագործությունների համար, բացառությամբ սույն մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործությունների համար, ինչպես նաև նախկինում պայմանական վաղաժամկետ ազատված անձի նկատմամբ նշանակված պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը,

4) ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի երկրորդ մասով, 132-րդ հոդվածի երկրորդ, երրորդ մասերով, 132.2-րդ հոդվածի երկրորդ, երրորդ մասերով, 138-րդ հոդվածի երրորդ մասով, 139-րդ հոդվածի երրորդ մասով, 175-րդ հոդվածի երրորդ մասով, 217-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերով, 218-րդ հոդվածի երրորդ մասով, 221-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերով, 222-րդ հոդվածի առաջին մասով, 266-րդ հոդվածի երրորդ մասով, 269-րդ հոդվածի երրորդ մասով, 299-րդ հոդվածի առաջին մասով, 305-րդ հոդվածով, 384-րդ հոդվածի երկրորդ մասով, 387-րդ հոդվածի երկրորդ մասով, 388-րդ հոդվածի երկրորդ մասով, 389-րդ հոդվածով, 390-րդ հոդվածի առաջին և երրորդ մասերով, 391-րդ հոդվածի երրորդ մասով, 392-րդ, 393-րդ և 394-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների համար նշանակված պատժի ոչ պակաս, քան երեք քառորդը»:

Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 76-ի 4-րդ մասով սահմանվում է, որ ազատազրկման և կարգապահական գումարտակում պա-

հելու ձևով պատժի փաստացի կրած ժամկետը չի կարող երեք ամսից պակաս լինել:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 76-ի վերլուծությունից հետևում է, որ ազատազրկման ձևով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատումը կարող է դատարանի կողմից կիրառվել միայն օրենքում նշված չափանիշների միաժամանակյա առկայության դեպքում, այն է՝ դատապարտյալի՝ ուղղվելու որոշակի աստիճանի հասնելը և նրա կողմից պատժի ժամկետի օրենքով պահանջվող մասը կրելը:

Դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հիմք կարող է լինել դատարանի համոզվածությունը, որ դատապարտյալն ուղղվելու համար կարիք չունի նշանակված պատժի մնացած մասը կրելու: ՀՀ քրեական օրենսգրքի 76 հոդվածի առաջին մասում ձևակերպված այս հիմքը խիստ անորոշ է, քանի որ բացակայում են այն հիմնական ցուցանիշները, որոնց հիման վրա դատարանը կարող է հստակ որոշել դատապարտյալի ուղղված լինելու փաստը և պատժի հետագա կրման աննպատակահարմարությունը: Նման անորոշությունը, անկասկած, բարդացնում է քրեակատարողական մարմինների աշխատանքը և նպաստում դրանց ավելորդ սուբյեկտիվիզմին:

Բնականաբար, դատապարտյալի ուղղման ցուցանիշները կախված են պատժի առանձնահատկություններից: Առավել լուրջ պահանջներ ներկայացվում են ազատազրկում կրող դատապարտյալներին: Մասնավորապես, նման ցուցանիշներ կարող են լինել քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգի պահանջների կատարումը, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից խրախուսանքի միջոցների արժանացած լինելը, վերաբերմունքը պատժին, ընդհանուր կրթական և մասնագիտական ունակությունների բարձրացման նպատակամղվածությունը և այլն: Ընդ որում, դատապարտյալի ուղղման մասին եզրակացությունը պետք է հիմնվի ոչ միայն պատժի կրման ընթացքում նրա դրսևորած վարքագծի, այլև նրա անձի և հանցագործության բազմակողմանի գնահատման վրա¹:

Առավել հստակ է թվում ՀՀ քրեական օրենսգրքի 76 հոդվածի 3-րդ մասում ներկայացված չափանիշը՝ դատապարտյալի կողմից պատժի որոշակի մասը կրած լինելը:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հնարավորություն է տալիս ցանկացած հանցանք կատարած դատապարտյալի՝ ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսդրության, որով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում չէր թույլատրվում կիրառել առանձնապես վտանգավոր կրկնահանցագործների նկատմամբ, ինչպես նաև մի շարք ծանր հանցագործությունների՝ բանդիտիզմի, զանգվածային անկարգությունների, դիտավորյալ սպանության, ծանրացուցիչ հանգամանքներում դիտավորությամբ ծանր մարմնական վնասվածք հասցնելու, առանձնապես չարամիտ խուլիգանության և այլնի դեպքում: Պատժից ազատելու այս տեսակը արգելվում էր կիրառել նաև այն անձի նկատմամբ, ում մա-

¹ Տե՛ս **Յ. Մ. Խաչիկյան**, ՀՀ քրեակատարողական իրավունք, Եր., 2009, էջ 235-236:

հապատիժը ներման կամ համաներման կարգով փոխարինվել էր ազատագրվածներ, նախկինում դիտավորյալ հանցագործությունների համար երկու և ավելի անգամ ազատագրվածն ուստապարտված անձի նկատմամբ, եթե նախորդ հանցագործությունների համար դատվածությունը չէր հանվել կամ մարվել օրենքով սահմանված կարգով, նրանց նկատմամբ, ովքեր նախկինում ազատագրվածն վայրերից պայմանական վաղաժամկետ ազատվել էին դատարանի կողմից նշանակված պատժաչափը լրիվ չկրած, և պատժի չկրած մասի ընթացքում կատարել էին դիտավորյալ հանցանք (ՀՀ 1961 թ. քրեական օրենսգրքի 49¹ հոդված): Մինչդեռ ՀՀ քրեական գործող օրենսգրքով էականորեն ընդլայնվել են պատժից ազատելու այս տեսակի կիրառման սահմանները՝ տարածելով այն նույնիսկ ցմահ ազատագրվածն ուստապարտվածների նկատմամբ: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 76-ի 5-րդ մասով սահմանվում է, որ ցմահ ազատագրվածն ուստապարտված անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա պատիժը հետագա կրելու կարիք չունի և փաստացի կրել է ազատագրվածն ոչ պակաս, քան քսան տարին²:

Ի դեպ, ցմահ ազատագրվածն ուստապարտված անձանց նկատմամբ պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելու անհրաժեշտության մասին է վկայում նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի պայմանական ազատման մասին 2003 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունած թիվ 22 հանձնարարականը, որը սահմանում է, որ ազատագրվածն վնասակար հետևանքները նվազեցնելու նպատակով դատապարտյալի ռեստիտուցիոն և հասարակության անվտանգության ապահովումը երաշխավորելու պարագայում օրենքը պատժից պայմանական ազատումը պետք է հասանելի դարձնի բոլոր դատապարտյալների, ներառյալ՝ ցմահ ազատագրվածն ուստապարտված անձանց համար³:

Խնդրո առարկայի մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով դիտարկենք, թե ինչպես են կարգավորված պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտին վերաբերող հիմնահարցերը տարբեր երկրներում:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 57-ի համաձայն՝ որոշակի ժամկետով ազատագրվածն ձևով պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը կարող է կիրառվել դատարանի կողմից, եթե՝

1) դատապարտյալը կրել է պատժի 2/3-ը, սակայն երկու ամսից ոչ պակաս,

2) անձի ազատումը ընդունելի է՝ հաշվի առնելով նաև հասարակության անվտանգության ապահովման շահերը,

3) դատապարտյալը համաձայն է, որ իր նկատմամբ պատժից պայմանական վաղաժամկետ ազատում կիրառվի:

² Տե՛ս «ՀՀ քրեական օրենսգրք», 18.04.2003 թ.:

³ Տե՛ս «Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի պայմանական ազատման (պայմանական վաղաժամկետ ազատման) մասին 2003 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունված թիվ (2003) 22 հանձնարարականի» 4-րդ կետը:

Որոշ դեպքերում դատարանն իրավունք ունի պայմանական վաղաժամկետ ազատել նաև պատժի կեսը, սակայն վեց ամսից ոչ պակաս ժամկետով ազատագրվում կրած անձին՝ երկու ինքնուրույն հիմքերի առկայության դեպքում, այն է՝

1) դատապարտյալը ազատագրվման ձևով պատիժ է կրում առաջին անգամ, և նշանակված պատիժը չի գերազանցում երկու տարին,

2) դատապարտյալի անձը, նրա կատարած արարքի բնույթը, ազատագրվման վայրում գտնվելու ժամանակ նրա զարգացումը թույլ են տալիս կոնկրետ դեպքը գնահատել որպես առանձնահատուկ⁴:

Գերմանիայի քրեական օրենսգրքի հոդված 57a-ն սահմանում է, որ ցմահ ազատագրվման դատապարտված անձը կարող է պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է ազատագրվման 15 տարին, հասարակության համար վտանգ չի ներկայացնում, և նրա կողմից պատժի հետագա կրման անհրաժեշտություն չկա⁵: Ի դեպ, հարցի նման կարգավորում է նախատեսված նաև Շվեյցարիայի քրեական օրենսդրությամբ⁶:

Ավստրիայի քրեական օրենսդրությունը ևս նախատեսում է պատժից պայմանական-վաղաժամկետ ազատման ինստիտուտ, որը, սակայն, հնարավոր է համարվում դատապարտյալի կողմից ազատագրվման մեկ երկրորդը փաստացի կրելուց հետո: Ընդ որում, ամեն դեպքում այդ ժամկետը չի կարող պակաս լինել երեք ամսից⁷:

Պատժից պայմանական-վաղաժամկետ ազատվելու չափանիշները *Ֆրանսիայում* ներառված են ոչ թե քրեական, այլ քրեական դատավարության օրենսգրքում, որի հոդված 729-ը սահմանում է, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատում հնարավոր է դատապարտյալի կողմից նշանակված պատժի առնվազն մեկ երկրորդը, իսկ քրեական օրենսգրքի հոդվածներ 132-8, 132-9, 132-10-ի իմաստով ռեցիդիվ դրսևորած անձանց պարագայում՝ երկու երրորդը փաստացի կրելուց հետո⁸: Ցմահ ազատագրվման դատապարտված անձինք պատժից պայմանական վաղաժամկետ կարող են ազատվել նվազագույնը 15 տարի ժամկետով ազատագրվում կրելուց հետո:

Իսպանիայում դատապարտյալը սովորաբար կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել պատժի կրումից, եթե փաստացի կրել է պատժի երեք քառորդը, դրսևորել է անբասիր վարքագիծ և հիմք տվել կարծելու, որ հասարակություն վերադառնալու պարագայում նա այլևս հանցանք չի կատարի: Առանձին դեպքերում *Իսպանիայի* քրեական օրենսդրությունը

⁴ Տե՛ս **Нерсесян А. А.** Вопросы наказуемости в уголовном праве ФРГ и США. М., 2005, էջ 196-198:

⁵ Տե՛ս German Criminal Code. version promulgated on 13 November 1998, Federal Law Gazette [Bundesgesetzblatt] p. 3322, last amended by Article 3 of the Law of 2 October 2009, Federal Law Gazette I p. 3214 Translation of the German Criminal Code provided by Prof. Dr. Michael Bohlander. 2010:

⁶ Տե՛ս Swiss Criminal Code. of 21 December 1937 (Status as of 1 January 2012):

⁷ Տե՛ս **Малиновский А. А.** Сравнительное правоведение в сфере уголовного права. М., 2002, էջ 259-270:

⁸ Տե՛ս Penal Code of France, March, 1994. Translation of John Rason Spencer QC; Version of 01.10.2005. Code of Criminal Procedure of France, 1958. Version of 14.11.2005:

թույլ է տալիս անձին պայմանական վաղաժամկետ ազատել նաև պատժի երկու երրորդը, իսկ բացառիկ դեպքերում՝ մեկ երկրորդը փաստացի կրելուց հետո, թեև օրենսդրությամբ հստակ չեն սահմանված այն չափանիշները, որոնք թույլ կտան տարբերակել, թե որ դեպքերում պետք է որպես պարտադիր պայման դիտվի պատժի 3/4-ը, իսկ որ դեպքերում՝ 2/3-ը կամ 1/2-ը կրած լինելը⁹:

Մեծ Բրիտանիայում պատժից պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել անբասիր վարք դրսևորած այն դատապարտյալի նկատմամբ, ով փաստացի կրել է պատժի մեկ երրորդը: Ընդ որում, այդ ժամկետը չի կարող պակաս լինել 12 ամսից: Պայմանական վաղաժամկետ կարող են ազատվել նաև նրանք, ովքեր դատապարտված են ցմահ ազատազրկման¹⁰:

ԱՄՆ-ում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հիմքերն ու պայմանները տարբեր նահանգներում նույնական չեն: Ընդհանուր մոտեցման համաձայն՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը թույլատրվում է ոչ պակաս, քան երեք հիմքերի միաժամանակյա առկայության դեպքում.

1) եթե օրենքը կոնկրետ կատեգորիայի դատապարտյալների՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համար արգելք չի նախատեսում (օրինակ՝ որոշ նահանգներում նման արգելք է սահմանված ցմահ ազատազրկման դատապարտվածների, ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն կատարած անձանց համար),

2) եթե դատապարտյալը փաստացի կրել է պատժի որոշակի ժամկետը,

3) եթե մարմինը, որի վրա դրված է դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծումը, գտնում է, որ տվյալ դատապարտյալը «իրեն լավ է դրսևորել» և ընդունակ կլինի ազատվելուց հետո զերծ մնալ նոր հանցանքներ կատարելուց, կատարել պատժից պայմանականորեն ազատված անձանց վարքի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի ցուցումները և վտանգ չի ներկայացնի հասարակության համար:

ԱՄՆ-ի նահանգների մեծ մասում դատարանը դատավճիռ կայացնելիս սահմանում է, թե պատժի քանի տարին կրելուց հետո դատապարտյալը պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու իրավունք կստանա¹¹:

Համեմատելով պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կանոնակարգման՝ ՀՀ քրեական օրենսգրքի և ներկայացված երկրների քրեական օրենսդրությունների մոտեցումները՝ ակնհայտ են դառնում այն սկզբունքային տարբեր մոտեցումները, որոնք առաջին հերթին վերաբերում են պատժից պայմանական վաղաժամկետ ազատման չափանիշ հանդիսացող ժամկետներին:

Թեև թե՛ ՀՀ, թե՛ քննարկված երկրների քրեական օրենսդրությունները պատժից պայմանական վաղաժամկետ ազատման պարտադիր չափանիշ են դիտում դատապարտյալի կողմից պատժի որոշակի մասը փաստացի

⁹ Տե՛ս **Jose Cid, Beatriz Tibar**. Revoking early conditional release measures in Spain. European Journal of Probation, University of Bucharest, Vol. 4, Number 1, 2012, էջ 114-115:

¹⁰ Տե՛ս **Малиновский А. А.**, նշվ. աշխ., էջ 259-270:

¹¹ Տե՛ս նույն տեղը:

կրած լինելու հանգամանքը, սակայն տարբերվում է ոչ միայն այդ ժամկետի տևողությունը, այլև նույնիսկ դրա հաշվարկման սկզբունքը:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 76-ի վերլուծությունը վկայում է, որ ՀՀ օրենսդիրը պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ժամկետների հաշվարկումը իրականացնում է՝ առաջնորդվելով հանցագործությունների տեսակով և ոչ թե դատարանի կայացրած դատավճռով, ինչպես դա իրականացվում է ԱՄՆ-ում և արևմտաեվրոպական երկրների ճնշող մասում: Մասնավորապես, ինչպես արդեն նշել ենք, ՀՀ օրենսդրության համաձայն՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե կրել է պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը, ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը, առանձնապես ծանր հանցագործության համար՝ պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը, իսկ առանձին դեպքերում՝ նաև երեք քառորդը:

Առաջին հայացքից թվում է, թե ՀՀ օրենսդրի դիրքորոշումն ավելի հիմնավորված է, քանի որ թույլ է տալիս հաշվի առնել կատարված հանցագործության տեսակը և դրսևորել տարբերակված մոտեցում: Թեև նման մոտեցման պարագայում անհասկանալի է, թե ինչու օրենսդիրը, հստակ տարբերակելով ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում պատժի այն նվազագույն ժամկետը, որն անհրաժեշտ է պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար, նույն մոտեցումը չի դրսևորել նաև ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքում և սահմանել է, որ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե կրել է պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը: Նման տրամաբանության պարագայում ցանկալի կլիներ, որ օրենսդիրը դրսևորեր նույն հետևողականությունը և ոչ մեծ ու միջին ծանրության հանցագործությունների պարագայում ևս տարբերակեր պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու չափանիշ հանդիսացող նվազագույն ժամկետները:

Այնուհանդերձ, խորությամբ վերլուծելով պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար անհրաժեշտ նվազագույն ժամկետի հաշվարկման ՀՀ օրենսդրի դրսևորած մոտեցումը, հանգում ենք այն հետևության, որ գործնական կիրառության ժամանակ ծագում են բազմաթիվ խնդիրներ: Մասնավորապես, միանշանակ մոտեցում չկա այն հարցի վերաբերյալ, թե պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ժամանակ ինչպես պետք է վարվել, եթե անձը կատարել է, օրինակ, մեկ միջին ծանրության և մեկ ծանր հանցագործություն (առաջինի համար դատապարտվելով 3 տարի, իսկ երկրորդի համար՝ 6 տարի ժամկետով ազատագրվման) և հանցագործությունների համակցությամբ դատապարտվել ազատագրվման, օրինակ, ութ տարի ժամկետով: Արդյո՞ք նման պարագայում ընդունելի է պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար անհրաժեշտ նվազագույն ժամկետի հաշվարկումն իրականացնել ծանր հանցագործության դեպքում սահմանված չափանիշով, որն է՝ պատժի երկու երրորդը կրած լինելը: Դրական պատասխանի պարագայում ակնհայտ է, որ անհիմն կերպով սահմանափակվում են դատապարտյալի

իրավունքները, սակայն միևնույն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի ներկայիս կանոնակարգումը առավել հաջող լուծման հնարավորություն չի ընձեռում հատկապես այն դեպքերում, երբ գործ ունենք 3 և ավելի հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ նշանակված պատժի հետ: Ի դեպ, գործնականում իրավակիրառողները, ինչպես նաև բազմաթիվ տեսաբաններ ներկայումս առաջնորդվում են այն սկզբունքով, որ հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ դատապարտված անձին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար անհրաժեշտ է պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող նվազագույն ժամկետի հաշվարկման հիմք ընդունել հանակցության մեջ մտնող առավել ծանր հանցագործության համար սահմանված չափանիշը¹²:

Բարձրացված խնդրի լուծումը դյուրին կդառնա, եթե պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող նվազագույն ժամկետի հաշվարկումն իրականացվի՝ հիմնվելով դատարանի կողմից կոնկրետ գործով կայացված դատավճռի վրա: Վերջինս հնարավորություն կտա նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ժամանակ առավելագույնս ապահովելու անհատականացման սկզբունքը, հատկապես օրենքով նախատեսվածից մեղմ, ինչպես նաև չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու պարագայում:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 76-ը պետք է ենթարկել փոփոխության և սահմանել, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել, եթե՝

1. մինչև 5 տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձը կրել է դատարանի դատավճռով նշանակված պատժի մեկ երրորդը,
2. 5-ից 10 տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձը կրել է դատարանի դատավճռով նշանակված պատժի մեկ երկրորդը,
3. 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտված անձը կրել է դատարանի դատավճռով նշանակված պատժի երկու երրորդը,
4. նախկինում պատժից պայմանական վաղաժամկետ ազատված, ինչպես նաև ծանրացուցիչ հանգամանքներում բռնությամբ զուգորդված հանցանք կատարելու համար դատապարտված անձը կրել է դատարանի դատավճռով նշանակված պատժի երեք քառորդը:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև անչափահասների պարագայում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ժամկետի հաշվարկումը:

Գործող քրեական օրենսգրքի հոդված 94-ը սահմանում է, որ անչափահաս տարիքում հանցանք կատարած և ազատազրկման դատապարտ-

¹² Стів Бажанов М. И., Баулин Ю. В., Борисов В. И. и др. Уголовное право Украины. Общая часть: Учебник. Харьков, 1999, т. 342-344, Жинкина Е. Ю. Назначение наказания по совокупности преступлений и по совокупности приговоров: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Краснодар, 2002, т. 12-14, «Постановление Верховного суда РФ «О судебной практике условно-досрочного освобождения от отбывания наказания, замены неотбытой части наказания более мягким видом наказания» от 21 апреля 2009, № 8 (в ред. «Постановления Пленума Верховного Суда РФ от 23.12.2010», № 31):

ված անձի նկատմամբ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

1. ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ քառորդը,

2. ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը,

3. առանձնապես ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը:

ՀՀ օրենսդիրը, փաստորեն, անչափահաս դատապարտյալներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու պարագայում սահմանել է ավելի արտոնյալ պայմաններ՝ կրճատելով այն նվազագույն շեմը, որն անհրաժեշտ է քննարկվող ինստիտուտը կիրառելու համար: Այնուհանդերձ, որոշ հարցեր դուրս են մնացել օրենսդրական կանոնակարգումից:

Մասնավորապես, գործնականում որոշակի դժվարություններ են առաջանում երկու կամ ավելի հանցանքներ կատարած այն դատապարտյալներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար անհրաժեշտ նվազագույն պատժաժամկետի հաշվարկման ժամանակ, ովքեր արարքներից մեկը կատարել են անչափահաս տարիքում, իսկ մյուսը կամ մյուսները՝ տասնութ տարին լրանալուց հետո: Հարցի լուծման միակ տարբերակը ներկայացված է ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումի 1971 թ. հոկտեմբերի 19-ի «Դատապարտյալների պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման և պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու դատական պրակտիկայի մասին» թիվ 9 որոշման 9 կետում, որի համաձայն՝ եթե մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարելու համար պատիժ կրող դատապարտյալը 18 տարին լրանալուց հետո կատարի նոր հանցանք, դատավճիռների համակցությամբ նշանակված պատժից պայմանական ազատվելու համար դատապարտյալը պետք է կրած լինի համակցության մեջ մտնող առավել ծանր հանցագործության համար սահմանված չափանիշին համապատասխանող պատժաժամկետը¹³:

Ներկայացված տարբերակն ընդունելի է, սակայն որոշակի հստակեցման կարիք ունի: Հնարավոր են իրավիճակներ, երբ հանցագործությունների դասակարգման նույն խմբին պատկանող, օրինակ՝ առանձնապես ծանր երկու հանցանքներ կատարած դատապարտյալը դրանցից մեկն իրագործած լինի անչափահաս տարիքում, իսկ մյուսը՝ չափահաս դառնալուց հետո: Նման պարագայում երկուսն էլ նույն ծանրության հանցանքներ են, սակայն դրանց համար նշանակված պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար անհրաժեշտ նվազագույն պատժաժամկետի հաշվարկման չափանիշները անչափահասների և չափահասների համար նույնը չեն. օրինակ՝ առանձնապես ծանր հանցագործությունների պարագայում անչափահասների համար հաշվարկման չափանիշը պատժի մեկ երկրորդը կրած լինելն է, մինչդեռ չափահասների համար՝ պատժի երկու

¹³ Տե՛ս «Постановление Пленума Верховного суда СССР “О судебной практике условно-досрочного освобождения осужденных от наказания и замены неотбытой части наказания более мягким” от 19 октября 1971», № 9 (в ред. «Постановления Пленума Верховного Суда СССР от 21.09.77», № 12 и от 26.04.81, № 7»):

երրորդը, իսկ առանձին դեպքերում՝ երեք քառորդը կրած լինելը: Տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար օրենսդրորեն անհրաժեշտ է ամրագրել, որ նման պարագայում պետք է ղեկավարվել կոնկրետ հանցագործությունների համար պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար անհրաժեշտ նվազագույն պատժաժամկետի՝ չափահասների համար սահմանված չափանիշով:

Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 76-ում պետք է նախատեսել առանձին մաս, որը կսահմանի հետևյալը.

«Եթե մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարելու համար պատիժ կրող դատապարտյալը 18 տարին լրանալուց հետո կատարի նոր հանցանք, դատավճիռների համակցությամբ նշանակված պատժից պայմանական ազատվելու համար դատապարտյալը պետք է կրած լինի հանակցության մեջ մտնող առավել ծանր հանցագործության համար սահմանված չափանիշին համապատասխան հաշվարկված պատժաժամկետը: Եթե կատարված հանցագործությունները պատկանում են հանցագործությունների դասակարգման նույն խմբին, ապա պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար դատապարտյալը պետք է կրած լինի հանցագործության այդ տեսակի համար չափահաս դատապարտյալների համար սահմանված չափանիշին համապատասխան հաշվարկված պատժաժամկետը»:

Օրենսդրական կանոնակարգման կարիք ունի նաև այն դրույթը, որը սահմանում է ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար անհրաժեշտ նվազագույն պատժաժամկետի հաշվարկման կարգը նոր դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում: ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 76-ի 7-րդ մասի ներկայիս ձևակերպումը սահմանում է, որ եթե ցմահ ազատազրկում կրող անձը դիտավորյալ նոր հանցանք է կատարել, որի համար նշանակվում է ազատազրկում, ապա ցմահ ազատազրկման դատապարտված անձանց՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող նվազագույն ժամկետի՝ 20 տարվա ընթացքը կասեցվում է մինչև նոր պատժի ժամկետը լրանալը:

Նման մոտեցումը թվում է չհիմնավորված. ցմահ ազատազրկման պարագայում պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը այս կատեգորիայի դատապարտյալների հանդեպ պետության դրսևորած առանձնահատուկ մարդասիրական մոտեցում է, որը հիմնվում է նաև այն կանխավարկածի վրա, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձը հասարակության համար այլևս վտանգ չի ներկայացնում¹⁴: Մինչդեռ նոր, հատկապես դիտավորյալ հանցանքի կատարումը վկայությունն է այն բանի, որ

¹⁴ **Տե՛ս Казакова Е. Н.** Условно-досрочное освобождение от отбывания пожизненного лишения свободы: проблемы и пути их решения // «Общество и право», 2008, № 3, էջ 21-23, **Горбач Д. В.** Условно-досрочное освобождение от отбывания пожизненного лишения свободы: некоторые проблемы и возможные пути их разрешения // «Уголовно-исполнительное право», 2010, № 2, էջ 51-54, **Горбач Д. В.** Условно-досрочное освобождение от пожизненного лишения свободы в законодательстве некоторых зарубежных стран // «Прикладная юридическая психология», 2011, № 4, էջ 147-150, **Коростылева О. В.** Некоторые аспекты условно-досрочного освобождения осужденных к пожизненному лишению свободы // «Вестник Кузбасского института», 2012, № 11, էջ 30-33:

դատապարտյալը չի կորցրել իր հանրային վտանգավորությունը: Հետևաբար՝ ավելի ճիշտ կլիներ, եթե օրենսդիրը նոր դիտավորյալ հանցանքի կատարման պարագայում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող նվազագույն 20-ամյա ժամկետի ոչ թե կասեցում, այլ ընդհատում նախատեսեր, որի դեպքում այդ ժամկետը պետք է վերստին սկսեր գործել նոր պատժի ժամկետը լրանալուց հետո:

Կարծում ենք, որ առաջարկվող օրենսդրական փոփոխությունները կարող են բարձրացնել պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու իսնտիտուտի կիրառման արդյունավետությունը:

АРМАН ОГАНЕСЯН – Фактическое отбытие определённого периода наказания как предпосылка применения условно-досрочного освобождения. – Отбытие некоторого срока лишения свободы – одна из предпосылок, обуславливающих условно-досрочное освобождение (УДО). Согласно статье 76 Уголовного кодекса РА, осуждённые могут быть условно-досрочно освобождены от наказания, если они, в соответствии с категорией совершённого ими преступления, фактически отбыли 1/3, 1/2, 2/3 или 3/4 назначенного судом наказания. Однако при данной регламентации неясно, какой из этих критериев нужно применить, когда речь идет о наказании, назначенном по совокупности преступлений или приговоров. В статье проанализирована законодательная регламентация данного института в некоторых зарубежных странах, и на этой основе предлагается закрепить в уголовном законодательстве РА новый подход – при дифференциации минимального фактического срока наказания, необходимого для применения УДО, основываться на продолжительности срока, назначенного приговором суда.

ARMAN HOVHANNISYAN – Serving Certain Period of Punishment as a Prerequisite for Parole. – Serving certain period of imprisonment is a prerequisite for parole eligibility. According to the article 76 of the RA Criminal code, the convicts are eligible for parole after in compliance with the category of the crime committed, they have actually served 1/3, 1/2, 2/3 or 3/4 of the punishment imposed by the court. However, which of these parole criteria must be used when dealing with the punishment imposed for multiple offences? The author, based on the comparative analysis of parole in criminal legislations of several foreign countries, suggests to introduce a new approach in the criminal legislation of Armenia and to differentiate the criteria for parole eligibility taking into account the length of the punishment imposed by the court judgement.